

ԱՊԱԳԻՆՅ

ԼՁ. ՏԱՐԻ ԹԻՒ 1970 ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, 26 ՅՈՒՆՈՒՄ 2015
• VOL. XXXVI, NO 1970 • LUNDI, 26 JANVIER 2015 • MONDAY, JANUARY 26, 2015

1915-2015
ՀԱՅՈՑ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
100-ԲԳ ՏԱՐԵՎԱՐԶ



ԿԸ ՅԻՇԵՄ ԵՒ ԿԸ ՊԱՀԱՆՁԵՄ

Կիւմրիի մէջ հայ ընտանիքի մը վեց անդամներ զոհ՝ Ռուս զինուորի մը քստմնելի ոճիրին



Կարճ տեւեց աշխարհի հայութեան գոհունակութիւնը երբ յայտնուեցաւ թէ Յունուար 7-ին Փարիզի մէջ կայացած ահաբեկչական սպանդի մը 12 զոհերէն բախտի բերմամբ ազատած էր հայ երիտասարդ լրագրողը, երբ քանի մը օր ետք, աշխարհի լրատու միջոցները կը տեղեկացնէին Հայաստանի Կիւմրի քաղաքին մէջ ռուս զինուորի մը ձեռքով հայ ընտանիքի մը վեց անդամներու արագահարուածի կրակոցներով սպանդի քստմնելի լուրը:

Կիւմրի քաղաքին մերձակայքը հաստատուած ռուսական զինուորական խարխիսիսն պատկանող 18-ամեայ զինուոր Վալերի Փերմեաքով, Երկուշաբթի, Յունուար 12-ի վաղ առաւօտեան կը մտնէր Կիւմրիի բնակիչ Աւետիսեան ընտանիքի յարկաբաժնէն ներս եւ AK-74 արագահարուածով կը սպաննէր նախ ընտանիքի 54-ամեայ հայրը՝ Սերիոժա Աւետիսեանը եւ ապա անոր կինը՝ Յասմիկ, դուստրը՝ Այտա, որդին՝ Արմէն եւ երկու տարեկան թոռը՝ Յասմիկ, որոնք տակաւին կը քնանային: Միակ վերապրողը կը մնար վեցամսեայ թոռը՝ Սերիոժա, որ Կիւմրիի հիւանդանոցին մէջ վիրահատութեան ենթարկուելէ վերջ կը փոխադրուէր Երեւանի Ս. Աստուածամայր հիւանդանոցը, ուր ան մինչեւ այս տողերու գրառումը տակաւին կը մնար ճակատագրական վիճակի մէջ:

Շար. Էջ 12

Սերժ Սարգսեանի պատասխանը Էրտողանին

«Սեր մօտ ընդունուած չէ հիւրընկալուիլ հրաւիրուողին՝ առանց սեփական հրաւերի պատասխանը ստանալու»

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսեան՝ ի պատասխան Թուրքիոյ Նախագահ Ռեճեփ Էրտողանի նամակին, ուր վերջինս Հայաստանի Հանրապետութեան Նախագահը հրաւիրած է ս.թ. Ապրիլ 24-ին ներկայ գտնուելու Թուրքիոյ մէջ Գալիպոլիի ճակատամարտի հարիւրամեակի յիշատակի ձեռնարկներուն, յղած է պատասխան նամակ, ուր, ինչպէս կը հաղորդեն ՀՀ Նախագահի աշխատակազմէն, ըսուած է.

«Յարգելի պարոն Նախագահ, Ստացայ Գալիպոլիի ճակատամարտի հարիւրամեակի յիշատակի ձեռնարկներուն մասնակցելու՝ ինծի ուղղուած ձեր հրաւերը: Յիրաւի, Առաջին աշխարհամարտը մարդկութեան պատմութեան ամենազարհուրելի էջերէն է, որ միլիոնաւոր անմեղ մարդկային կորուստներու եւ ճակատագրերու խեղճան պատճառ դարձաւ:

Գալիպոլիի ճակատամարտի մասնակից էր նաեւ Օսմանեան կայսրութեան զօրքերու հայ հրետանաւոր, հրամանատար Սարգիս Թորոսեանը. սպայ, որ նուիրուած էր կայսրութեան պաշտպանութեան ու անվտանգութեան ապահովման եւ հաւատարիմ ծառայութեան ու սիրանքներու համար Օսմանեան կայսրութեան կողմէն արժանացած էր ռազմական պարգէներու: Մինչդէռ, նոյն թուականին իր գազաթնակետին հասած՝ Օսմանեան կայսրութեան կողմէն հայ ժողովուրդին նկատմամբ Նախագայե



ծրագրուած եւ իրականացուած զանգուածային ջարդերու եւ բռնի տեղահանման ալիքը չըջանցեց անգամ Սարգիս Թորոսեանը: Ցեղասպանութեան զոհ գացած մեկուկէս միլիոն հայերու թիւին մէջ էին անոր ծնողները, որոնք դաժանաբար սպանուեցան, իսկ քոյրը մահացաւ Սուրիոյ անապատին մէջ:

Նոյնիսկ Նախագայեպը չունեցող այդ կոտորածին արդիւնքն էր, որ Ռաֆայել Լեւոնիսը ստեղծեց «ցեղասպանութիւն» եզրոյթը, եւ անոր անպատժելիութիւնն էր, որ հող Նախագատրաստեց Հոլոքոսթի եւ

Շար. Էջ 13

Վալերի Պուլայե՝ «Թուրքիոյ Նախագահը չափը անցուց»

Երեսփոխանուի Վալերի Պուլայե դատապարտելէ ետք թրքական արդարադատութեան կողմէ ի գործ դրուած համացանցային այս գրաքննութիւնը եւ «ճումհուրիյե»-ի նկատմամբ կատարուած ճնշումներն ու սպառնալիքները կը յիշեցնէ, թէ Տաւութօղլու դէմ Կիրակի օր կը տողանցէր յառնու արտայայտութեան ազատութեան: Ապա կ'ըսէ թէ յաջորդ օր իսկ՝ Յունուար 12-ին, Թուրքիոյ Նախագահ Էրտողան բացայայտօրէն մեղադրեց Ֆրանսան, զոր նկատեց ջարդին պատասխանատուն՝ մահմետականները ամբաստանել տալու համար: Պուլայե կը շարունակէ. «Եւ ան անելուց. «որպէս մահմետական, մենք երբեք չպաշտպանեցինք ահաբեկչութիւնը կամ ջարդերը, ցեղապաշտութիւնը, ատելավառ ճառերը. ասոնց ետին կը թաքնուի իսլամատեացութիւնը... Յանցաւորները յայտնի են. Ֆրանսայի քաղաքացիներ գործեցին այդ ջարդը եւ հիմա ալ մահմետականները կը մեղադրուին»:

Այս տողերէն ետք, Պուլայե-տիւ-Ռոնի երեսփոխանուիին կ'ըսէ, թէ այրերու եւ կիներու ըստ բնութեան՝ անհաւասարութեան պնդումներէն, կաշառակերութենէն, զսպումներէ, արտայայտութեան ազատութեան կաշկանդումէն ետք Էրտողան կը շարունակէ իր ամբողջատիրական կեցուածքը, արհամարհելով օրէնքի երկրի տարրական սկզբունքները:

Պուլայե, այս առնչութեամբ կը քննադատէ Նախագահ Հոլանտը, որ լուր կը մնայ Էրտողանի գրգռութիւններուն դիմաց, մինչ վերջինս Ֆրանսայի ներքին հարցերուն մասին նման արտայայտութիւններ կ'ունենայ: «Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի նախօրեակին պէտք է անելի քան երբեք միասնութիւն ցուցաբերենք եւ ընենք այնպէս մը, որ Պատմութիւնը չթոթուի» կ'եզրափակէ Պուլայե:

Հրանդ Տիկիի ոգեկոչում իր գերեզմանին շուրջ

Կիրակի, 18 Յունուարին, «Ակօս» թերթի հիմնադիր եւ խմբագրապետ Հրանդ Տիկիի սպանութեան 8-րդ տարեւոյցը նշուեցաւ յատուկ արարողութեամբ մը, ներկայութեամբ իր ընտանիքին եւ բարեկամներուն:

Յետ միջօրեի ժամը 2:30-ին սկսած հոգեհանգստեան արարողութիւնը տեղի ունեցաւ Չէյքիսկայրնու Պալիքի Հայկական Գերեզմանատան մէջ, մասնակցութեամբ ողբացեալին այրիին՝ Ռաբելի, իր որդւոյն՝ Արադի, իր եղբայրներուն եւ ընկերներուն:

Հրանդ Տիկիի շիրիմին վրայ ծաղիկներ գետեղելէ ետք սկսաւ արարողութիւնը ու ապա կատարուեցան աղօթքներ, եւ գերեզմանի պահապան Մալիք Եալչին կարդաց Հրանդ Տիկիի յիշատակին նուիրուած թերթըլած մը:

Թուրքիոյ խորհրդարանի անդամ Սեզկին Թանրիգուլու իր ելոյթին մէջ յիշեցուց թէ Տիկիի սպանութիւնը պատահեցաւ ԱԶԲ-ի իշխանութեան օրով, եւ անելուց թէ դատական գործընթացը եւս կատարուած է նոյն իշխանութեան շրջանին: Ան հաստատեց թէ հանրային ծառայութեան պաշտօնատարներ որոնք անհոգութեամբ վերաբերուեցան իրենց պարտականութիւններուն մէջ եւ պատասխանատու էին կատարուած սպանութեան, ունեցան պաշտօնի բարձրացումներ: «Սա պարագայ մըն է պետական պատասխանատուութեան, բայց այսօր անոնք կը ջանան մեղադրել ուրիշներու, ըսած է Թանրիգուլու եւ յայտնած է թէ բացի մի քանի հրացան ճոճողներու, ոճիրին ետին եղող բուն կազմակերպութիւնը չէ յայտնաբերուած:

Յաջորդ օրուան համար Հրանդ Տիկիի յիշատակին նուիրուած արարողութիւն մը ծրագրուած էր նաեւ «Ակօս» թերթի առջեւ, ուր սպանուած էր Հրանդ Տիկի 19 Յունուար 2007-ին:



Երտողան ու Ալիյե Անգարայի մեջ 15 Յունուար 2015-ին ընդունեցին զգայացունց որոշում

24 ԱՊՐԻԼ 2015-Ը ՀՈՉԱԿՈՒԵՑԱԲ ՉԱՆԱՔՔԱԼԵԻ ՊԱՏԵՐԱԶՍԻ ՀԱՐԻՐԱՄԵԱԿԻ ԹՈՒԱԿԱՆ - ԱԼԻՅԵԻ ՈՒ ԵՐՏՈՂԱՆ ԱՅԴ ՕՐ ՊԻՏԻ ԺԱՄԱԴՐՈՒԻՆ ՉԱՆԱՔՔԱԼԵԻ ՄԵՉ - ՀՐԱԲԵՐ ՈՒՂՂՈՒԵՑԱԲ ՆԱԵՒ ԱՇԽԱՐՀԻ ՉԱՆԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀՆԵՐՈՒՆ ՈՒ ՎԱՐՉԱՊԵՏՆԵՐՈՒՆ

Յրաւեր Մըն Ալ Ղրկուեցաւ Հայաստանին

Թուրքիոյ Նախագահ Թայյիպ Երտողան Անգարայի մեջ զինուորական շունդալից հանդիսութեամբ մը ընդունեց այցելութիւնը Ատրպէյճանի Նախագահ Իլիամ Ալիյեի: Ալիյե աւանդութիւնը յարգած էր եւ տարւոյն առաջին պաշտօնական այցելութեան համար ըստրած էր Թուրքիան, ինչ որ Թուրքիոյ կողմէ ողջունուեցաւ գոհունակութեամբ: Ալիյե եւ Երտողան Նախ ունեցան զլուսի գլխի տեսակցութիւն, ապա ստորագրուեցան նորանոր համաձայնագիրներ, եւ ամենէն վերջ երկու Նախագահները սարքեցին միատեղ մամլոյ ասուլիս: Մամլոյ ասուլիսի ընթացքին հրապարակուեցաւ զգայացունց նորութիւն մը, նորութիւն մը որ յայտնապես կազմակերպուած է որպէս պատասխան 1915-ի հարիւրամեակի առիթով Հայերու կողմէ յառաջիկայ 24 Ապրիլ 2015ը հռչակեցին Չանաքքալէի պատերազմի հարիւրամեակի օր, որոշեցին այդ թուականին մէկտեղուիլ Չանաքքալէի մէջ, եւ այդ առիթով ներկայ գտնուելու հրաւերներ ուղղել Նաեւ աշխարհի զանազան պետու-

թիւներու Նախագահներուն: Ասիկա կը նշանակէ որ աշխարհի զանազան պետութիւններու Նախագահները երկու հրաւերներ պիտի ստանան 24 Ապրիլ 2015 թուականի համար, մէկը Հայաստանի Ծիծեռնակաբերդի մէջ 1915-ի հարիւրամեակին նշումին ներկայ գտնուիլ, միւսը Չանաքքալէի Պատերազմի հարիւրամեակի առիթով Չանաքքալէ գտնուիլ: Ալիյե ու Երտողանի առաջնորդութեամբ նոր համաձայնագիրներ ստորագրուեցան երկու երկիրներու միջեւ, ըսուեցաւ որ ուժանիւթի ծրագիրը մեծ իրականացում պիտի ըլլայ Ատրպէյճանի ու Թուրքիոյ միջեւ: Երտողան մամլոյ ասուլիսի ընթացքին զանազան նիւթերու կարգին անդրադարձաւ Նաեւ Ղարաբաղեան հարցին եւ ըսաւ որ Ղարաբաղեան հարցի վերջին հանգրուանին մասին տեղեկութիւններ ստացաւ Ալիյեին:

Շար. էջ 3

Ատրպէյճան եւ Թուրքիա մեծ թիւով բանտարկուած լրագրողներ ունին

Լրագրողներու պաշտպանութեան յանձնախումբը հրապարակեց ցանկը այն երկիրներուն, որոնք ամենամեծ թիւով բանտարկուած լրագրողներ ունին: Այս ցանկին մէջ Ատրպէյճան ու Թուրքիա առաջին տասնեակին մաս կը կազմեն: 2014ին, աշխարհի զանազան երկիրներու մէջ 220 լրագրողներ բանտարկուած են: 2015ի բաղդատմամբ, 2014-ին ձերբակալեալ լրագրողներուն թիւը 9-ով աւելցած է: Ամենամեծ թիւով բանտարկուած լրագրողներ ունին Նաեւ Հինաստան, Երիթրիա, Եթովպիա, Իրան, Վիետնամ, Եգիպտոս ու Պոլմա (Միանմար): Տեղեկագրին մէջ դիտել կը տրուի որ ներկայիս Ատրպէյճանի բանտերուն մէջ կան առնուազան 9 լրագրողներ, սակայն այդ երկրի իշխանութիւնները կը պնդեն թէ ոեւէ լրագրող բանտարկուած չէ:

Հրատապ լուր. Ամալ Զլունին Հայաստանը պիտի ներկայացնէ Եւրոպական Դատարանին մէջ

ՅԱՐՈՒԹ ԱՍՏՈՒՆԵԱՆ
“Քալիֆորնիա Զուրիզը” թերթի
հրատարակիչ եւ խմբագիր
www.TheCaliforniaCourier.com

Այս յօդուածին մէջ առաջին անգամ անսպասելի նորութիւն մը կը բացայայտուի՝ հանրայայտ դերասան եւ մարդու իրաւունքներու պաշտպան ճորճ Զլունիի կինը՝ Ամալ Ռամզի Ալամուտիինը, յաջորդամիս Հայաստանը ներկայացնող փաստաբաններէն մէկը պիտի ըլլայ Մարդու իրաւունքներու եւրոպական դատարանին մէջ (ՄԻԵԴ):

Որոշ ընթերցողներ կրնան հարց տալ, թէ ինչպէ՞ս կին մը՝ “Էլլ” (Elle) ամսագրի նկարագրութեամբ, ունենալով “շլացուցիչ տեսք եւ շքեղ մազեր, կրելով բաց հագուստներ, նորաձեւ տաբատներ, գոյնզգոյն կրունկներ”, ներգրաւուած է նման բարդ իրաւական հարցին մէջ:

Շատ մարդիկ տեղեակ չեն, որ Ամալ Ալամուտիինը, այժմ տիկին Զլունիին, իր գեղեցիկ դէմքէն աւելի այլ բարձր արժանիքներ ունի նման կարեւոր յանձնարարութեան համար:

Ամալ Զլունիին բարձրակարգ փաստաբան է, որ մասնագիտացած է միջազգային իրաւունքի, քրեական իրաւունքի, մարդու իրաւունքներու պաշտպանութեան եւ արտա-յանձնման ոլորտներու մէջ: Ան ներգրաւուած եղած է շարք մը խոշոր դատավարութիւններու մէջ, ինչպէս՝ Էլկինի մարմարները Մեծ Բրիտանիայէն Յունաստան վերադարձնելու դատը, “Ուիլիլիքս”-ի ճուլիան Ասանժի պաշտպանութիւնը եւ Ութրանիոյ Նախկին վարչապետ Եուլիա Տիմոշենքոյի դատը: Ան նաեւ աշխատած է ՄԱԿ-ի մէջ Լիբանանի հարցերով յատուկ դատարանի դատախազի, ինչպէս նաեւ Նախկին Հարաւ Սլաւիոյ համար Միջազգային քրեական դատարանի

հետ: Ամալ ծնած է 1978 թուականին Լիբանան, անոր հայրը տուրզի է, իսկ մայրը՝ սուրի մահմետական: Երկու տարեկանին անոր ընտանիքը կը տեղափոխուի Մեծ Բրիտանիա: Իրաւաբանական կրթութիւնը ստացած է Նիւ Եորքի համալսարանի իրաւաբանական Բաժանմունքի մէջ եւ աշխատած՝ Արդարադատութեան միջազգային դատարանին մէջ (Համաշխարհային դատարան): 2010 թուականին Լոնտոն վերադառնալէն ետք ան դարձած է “Տաութի Սթրիթ չեմպերզ” (Doughty Street Chambers) փաստաբան: Եղած է Սուրիոյ հարցերով ՄԱԿ-ի յատուկ յանձնակատար Զոֆի Անանի խորհրդակցանք, իսկ 2013 թուականին՝ ՄԱԿ-ի անօդային սարքերու քննութեամբ զբաղող խումբի փաստաբանը: Ան գերազանց կը տիրապետէ անգլերէնին, ֆրանսերէնին եւ արաբերէնին: 2014 թուականի Սեպտեմբերին անոր ամուսնութիւնը ճորճ Զլունիի հետ լայնօրէն լուսաբանուեցաւ միջազգային մամուլի մէջ:

Տիկին Զլունիին, նման անթերի արժանիքներով, մեծ առաւելութիւն մը պիտի ըլլայ Հայաստանի իրաւական խումբի համար Սթրազպուրկի մէջ՝ Յունուար 28-ին Մարդու իրաւունքներու եւրոպական դատարանին մէջ “Փերինչէքը ընդդէմ Չուիցերիոյ” վերաքննութեան գործին:


Դատական գործը կապուած է զուիցերական դատարաններու կողմէ թրքական փոքրիկ կուսակցութեան ղեկավար Տողու Փերինչէքին մեղաւոր ճանչնալուն հետ, որ 2005-ին մեկնած էր Չուիցերիա՝ յատուկ դիտաւորութեամբ ծխտելու: Հայոց ցեղասպանութիւնը: 2008-ին Փերինչէքը Չուիցերիոյ դատարանի որոշումը բողոքարկեց Մարդու իրաւունքներու եւրոպական դատարանին մէջ: 2013-ի Դեկտեմբեր

17-ին ՄԻԵԴ-ի եօթ դատաւորներէն հինգը որոշում կայացուցին, որ Չուիցերիան խախտած է Փերինչէքի ազատ խօսքի իրաւունքը:

Ասիկա երկակի չափանիշներով կայացուած անարդար եւ անընդունելի որոշում էր, քանի որ դատարանը հրեաներու Հոլոքոսթի ժխտումը յանցանք համարած է, իսկ Հայոց ցեղասպանութեան ժխտման արգելումը՝ խօսքի ազատութեան ոտնահարում: Հինգ դատաւորները, որոնք որոշում կայացուցած էին ընդդէմ Չուիցերիոյ, թոյլ տուած են դատողութեան եւ տուեալներու անհամար սխալներու՝ աղաւաղելով Փերինչէքի պնդումները, խեղաթիւրելով Չուիցերիոյ օրէնքներն ու դատավճիռները, չունենալով Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ տարրական գիտելիքներ եւ բազմիցս հակասելով իրենք իրենց: Եօթ դատաւորներէն երկուքը չհամաձայնեցան մեծամասնութեան որոշումին եւ ներկայացուցին 19 էջոց համապարփակ գեկոյց մը Հայոց ցեղասպանութեան մասին՝ կողմնակից ըլլալով զուիցերիական դատարանին:

2014-ի Մարտ 17-ին Չուիցերիա որոշեց բողոքարկել ՄԻԵԴ-ի վճիռը 17 դատաւորներէ կազմուած Մեծ պալատին՝ պաշտպանելու համար իր երկրի օրէնքներու եւ իրաւական համակարգի վարկը: Մասնաւորապէս, Չուիցերիոյ կառավարութիւնը դատարանի որոշումը վիճարկեց հետեւեալ երեք պատճառներով.

- 1) ՄԻԵԴ-ը Նախապէս երբեք չէ զբաղած ցեղասպանութեան իրական որակաւորմամբ եւ խօսքի ազատութեան սահմանումով.
- 2) Չուիցերիոյ “հայեցողութեան շրջանակի” անհարկի ձեւով նուազեցում՝ ըստ ՄԻԵԴ-ի իրաւագիտութեան փորձի.
- 3) “Արհեստական տարբերութիւններու” ստեղծում. միջազգային Շար. էջ 4


Շաբաթաթերթ

ABAKA

Hebdomadaire Arménien
Armenian Weekly ISSN 0382-9251

Publié par /Published by
Le Centre de Publication Tékéyan
825 rue Manogian, Saint-Laurent,
Québec H4N 1Z5

Tél: (514) 747-6680 • FAX: (514) 747-6162
e-mail: abaka@bellnet.ca
www.tekeyanmontreal.ca

Պատասխանատու խմբագիր՝ ԱԻԵՏԻՍ ՊԱԳՉԱԼԵԱՆ

Ծանուցումներու, նուիրատուութիւններու եւ գրասենեակի պատասխանատու՝ ՍԱԼԻՒ ՄԱՐԿՈՍԵԱՆ

Թորոնթոյի պատասխանատու՝ ՄԱՏԱԹ Բ. ՄԱՄՈՒԻԵԱՆ

Canada 2nd Class \$80 (QC & ON) 1ère classe/first class \$90 U.S.A. 1st class (US)\$90 Autres pays/Other countries: 1st class (US)\$120 Per issue \$1.75
Dépôt légal: Bibliothèque du Québec
PM40015549R10945
TPS/GST – R119209294 • TVQ/PST #1006268699

“We acknowledge the financial support of the Government of Canada through the Canada Periodical Fund (CPF) for our publishing activities.”



Թեթեան Մշակութային Միութիւն - Լոս Անճելըս ԲԵՂՄՆԱԿՈՐ ՈՒ ԱՐԴԻԲՆԱԿԵՏ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՄԸ ԱԲԱՐՏԻՆ

Լոս Անճելըսի հայաիւրեմ զաղութեան ներս, Թեթեան Մշակութային Միութեան մասնաճիւղը 2014 թուականին բոլորեց իր կազմութեան 45-ամեակը: Չորսուկէս տասնամեակներու վրայ տարածուող գործունեութեանց ամբողջական ծրագիրներով, Մասնաճիւղը բազմիցս արժանացաւ Միութեան Միացեալ Նահանգներու եւ Գանատայի ԹՄՄ-ի Տիգրան Սմարտեան Բաժանին:

Կերջացող տարին եւս արդիւնաւետ դարձաւ Մասնաճիւղի վարչութեան 10 յաջորդական ձեռնարկներու ծրագրումով, բեղմնաւոր տարեշրջան մը եւս բոլորելով Լոս Անճելըսահայ զաղութեան ներս, զաղութեան մամուլն ալ մասնակից դարձնելով կայացած ձեռնարկներու արձագանգին:

Թեթեան Մշակութային Միութեան Միացեալ Նահանգներու եւ Գանատայի Կեդրոնական Վարչութեան անդամ եւ Մասնաճիւղի վարչութեան երկարամեայ ատենապետ Վաչէ Սեմերճեանի գլխաւորութեամբ, Մասնաճիւղը տարեշրջանիս ընթացքին 2014 Մարտին գումարած էր իր անդամական ընդհանուր ժողովը՝ տարեկան գործունեութեան համադրուած տեղեկատուութեամբ, ինչպէս նաեւ վարչական ու խորհրդակցական հաւաքներով իրագրեց պահելով Մասնաճիւղի անդամները՝ տարեշրջանի իրագործումներուն:

Յորեայ աւանդութիւն դարձած վարչական հաւաքը՝ Ուրբաթ, Յունուար 2, 2015-ին, վարչութեան ժրջան անդամներ Վահան եւ Մարալ Ոսկեաններու բնակարանին մէջ: Հաւաքական ճաշով ու կենացներով համեմուած այս ընթրիքը, տօնական օրերու գնահատանքի, շնորհակալութեան եւ ուրախութեան այս հաւաքին, որուն ներկայ էին վարչական անդամները՝ իրենց տիկիններով եւ ամուսիններով, հրաւիրուած էին նաեւ նախկին վարչական անդամները՝ իրենց տիկիններով եւ ամուսիններով, հրաւիրուած էին նաեւ նախկին վարչական Լորա Գոյունճեան եւ վարչութեան անսակարկ օժանդակող Արա Ահարոնեան: Դրուատելով վարչութեան անդամներուն համերաշխ ու զոհաբեր գործունեութիւնն ու մասնակցութիւնը տարեշրջանի բոլոր ձեռնարկներուն, ատենապետ Սեմերճեան երախտագիտական իր խօսքը ուղղեց իւրաքանչիւր վարչականի: Խօսք առին նաեւ փոխ ատենապետ Բարսեղ Գարթալեան եւ անդամներ:

Ամանորեայ խանդավառ այս հաւաքը, ջերմ ու մտերմիկ մթնոլորտի մը մէջ կայացած, վերանորոգեց վարչական անդամներուն յառաջիկայ տարեշրջանի պատրաստակամութիւնը՝ Մասնաճիւղին աշխոյժ աշխատանքին նպաստելու, պահելու համար Միութիւնը իր յարգուած պատուանդանին վրայ:
Թեթեանցի թղթակից

Կարէն Միրզոյեան՝ «բանակցութիւններուն Ղարաբաղի մասնակցութիւնը կը բխի երկու կողմերուն շահերէն»

Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման հարցին մէջ իսկական յառաջընթացի կարելի է հասնիլ միայն, գոյութիւն ունեցող իրողութիւնները եւ բանակցութիւններու լիարժէք ձեւաչափը հաշուի առնելով՝ անոր բոլոր հանգումներուն մէջ Լեռնային Ղարաբաղի անմիջական եւ ուղղակի մասնակցութեան վերականգնման պայմանով: «Նիուզ»-ի հետ ունեցած զրոյցին ընթացքին այս հաստատումը կատարեց Լեռնային Ղարաբաղի արտաքին գործոց նախարար Կարէն Միրզոյեան:



Լեռնային Ղարաբաղի բացակայութիւնը բանակցային սեղանի մօտ խնդրայարոյց է դարձնում ատրպէյճանա-ղարաբաղեան հիմնախնդրի վերջնական կարգաւորումը: Վստահ ենք, որ բանակցութիւններում Լեռնային Ղարաբաղի անմիջական մասնակցութեան վերականգնումը բխում է բոլոր կողմերի շահերից, որոնք շահագրգռուած են Լեռնային Ղարաբաղի եւ Ատրպէյճանի միջեւ հիմնախնդրի արագ կարգաւորման հարցում:

Այսօր այս հարցում միակ խոչընդոտը պաշտօնական Պաքուի ապակառուցողական քաղաքականութիւնն է եւ նրա առկայ իրողութիւններն ընդունելու ցանկութեան բացակայութիւնը», ընդգծեց Կարէն Միրզոյեան:

Երտողան ու Ալիյեւ Անգարայի... Շար. էջ 2-էն

«Ինչ որ կը տեսնուի, այն է որ Մինսքեան համաձայնագրի տակաւին չէ կրցած վճռական քայլ մը առնել ու ասիկա դարձած է ժամանակ շահելու ռազմավարութիւն, ըսաւ Նախագահ Երտողան: Հակառակ որ այս մասին միջազգային որոշումներ ընդունուած են, ցաւալի է որ հարցը կը շարունակուի ձգձգումներով ու ժամանակ շահելու ռազմավարութեամբ: Թուրքիա ասկէ վերջ ալ վճռական կերպով պիտի շարունակէ նեցուկ կանգնիլ Ատրպէյճանի, որպէսզի Ղարաբաղեան հարցը լուծուի Ատրպէյճանի հողային ամբողջականութեան սկզբունքով: Ինչպէս քանիցս ըսած ենք, Թուրքիոյ դիրքաւորումը շատ յստակ է: Մեր տեսակցութեան ընթացքին ձեռք առինք այս նիւթերը»:

Ատրպէյճանի հետ բարեկամութեան գետնի վրայ ուրիշ քայլ մըն ալ պիտի առնէ:

«Թուրքիա այս տարի պիտի ստանձնէ ԿԷ-20 երկիրներու հաւաքականութեան հերթական նախագահութիւնը եւ այս առիթով պիտի գործածէ իր մէկ լիազօրութիւնը ու նստաշրջանի ընթացքին որպէս հիւր ներկայ գտնուելու պիտի հրաւիրէ Ատրպէյճանը: ԿԷ-20ի բանակցութիւններու ընթացքին Ատրպէյճանն ալ մեր քովը պիտի ըլլայ», ըսաւ Երտողան:

Այս Երտողան ըրաւ զգայացունց յայտարարութիւն մը. Ըսաւ որ 24 Ապրիլը Չանսքայի պատերազմին հարիւրամեակն է, աշխարհի բազմաթիւ պետութեան նախագահներուն ու վարչապետներուն հրաւերներ ուղղեցին 24 Ապրիլին Չանսքայի մէջ մէկտեղուելու ուղղութեամբ:

«Բայց մեզի համար ամենէն կարեւորն ու զգացականն ալ այն է որ Աստուծով ես ու Իլիամ Ալիյեւ եղբայրս այդ օր միասին պիտի ըլլանք

Չանսքայի մէջ» ըսաւ Երտողան ու իր խօսակցութիւնը աւարտին բերաւ մաղթելով որ այս այցելութիւնը բախտաբեր ըլլայ:

Այնուհետեւ խօսեցաւ նաեւ Իլիամ Ալիյեւ որ ըսաւ որ ԿԷ-20 երկիրներու համագումարին Ատրպէյճանի ուղղուած հրաւերը շօշափելի փաստ մըն է Թուրքիոյ ու Ատրպէյճանի անխախտելի բարեկամութեան: Այս բարեկամութիւնը ասկէ վերջ ալ պիտի շարունակուի:

Իլիամ Ալիյեւ ապա ըսաւ որ Չանսքայի պատերազմի հարիւրամեակը պիտի նշուի 24 Ապրիլ 2015 թուականին: Ան ակնարկեց Հայկական դէպքերու հարիւրամեակին եւ ըսաւ.

«Չանսքայի Պատերազմի հարիւրամեակի նշումին համար 24 Ապրիլ թուականի ընտրութիւնը շատ կարեւոր է եւ ատոր համար ձեզի շնորհակալութիւն կը յայտնեմ թէ՛ իմ անունով, թէ՛ Ատրպէյճանի ժողովուրդին անունով: Այս թուականի ընտրութիւնը շատ նշանակալից քայլ մըն է», ըսաւ Ալիյեւ:

Ալիյեւ դիտել տուաւ որ բազմաթիւ հարցեր դրուեցան սեղանի վրայ ու այդ հարցերը պիտի լուծուին միասնական աշխատանքով: Ըսաւ որ Երտողանին հետ խօսեցան նաեւ Ղարաբաղեան հարցի ու Հայաստան-Ատրպէյճան բախումներու մասին: Այս խնդրին մէջ Թուրքիա նեցուկ կը կանգնի արդարութեան, իրաւունքին, միջազգային իրաւագիտութեան ու երկու երկիրներու եղբայրակցութեան: «Ատրպէյճանի հողամասերը, որոնք ճանաչում գտած են աշխարհի բոլոր պետութիւններու կողմէ, երկար տարիներէ ի վեր կը գտնուին Հայկական բռնագրաւումի տակ: Հակառակ որ ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհուրդը որոշումներ ընդունած է որպէսզի վերջ տրուի բռնագրաւումին, Հայաստան չի հնազանդիր: Ասիկա ցոյց կուտայ որ Հայաստան հաշտութիւն չի ցանկար: Մինսքեան համաձայնագրի պայմաններու պայմաններով կարելի է հաշտութիւն գտնել: Աշխատանք կայ, բայց լուծում չկայ: Անցեալ

տարի որոշ յառաջդիմութիւն մը արձանագրուած էր, բայց Հայաստան անմիջապէս ձեռնարկեց զրգռիչ արարքներու, Նոյեմբերին բռնագրաւած հողամասերու վրայ զինափորձեր կատարեց, Ատրպէյճանի գիծերուն վրայ յարձակումներ գործուեցան: Անշուշտ Ատրպէյճան անհրաժեշտ պատասխանները տուաւ, բայց այս բոլորը դրական ներգործութիւն չունեցան բանակցութիւններու վրայ: Այս հարցը կը լուծուի միայն հողային ամբողջականութեան սկզբունքով: Ալիյեւ զօրաւոր պետք է ըլլանք որպէսզի ձեռք բերենք այդպիսի արդիւնք մը», ըսաւ Ալիյեւ:

Յայտնի կը դառնայ որ 24 Ապրիլի կապակցութեամբ Երտողանի ու Ալիյեւի այս որոշումը մէկն է այն ռազմավարութիւններէն, որոնք Թուրքիա դիմելու կը պատրաստուի դիմագրաւելու համար 1915-ի հարիւրամեակի Հայկական ձեռնարկները: Այս կերպով պատասխան ստացած կ'ըլլան բոլոր անոնք որոնք միջոց է մը ի վեր հարց կուտային թէ Երտողան, որ անցեալ տարի ցաւակցութիւն յայտնած էր 1915-ի զոհերուն համար, 24 Ապրիլին Երեւան ալ կ'երթա՞յ արդեօք ընթացք տալով Հայաստանի հրաւերին:

Հետաքրքրական է տեսնել թէ աշխարհի զանազան երկիրներէ ներս ի՞նչ տպաւորութիւն պիտի գործէ Նախագահ Երտողանի այս զգայացունց որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՆ ՀՐԱԴԻՐՈՒԹՅԱԴ

«Սապահ»-ի մէջ կը կարդանք որ 24 Ապրիլ 2015-ին Չանսքայի մէջ կատարելի հանդիսութեան ներկայ գտնուելու հրաւեր ղրկուեցաւ նաեւ Հայաստանի:

Նախագահ Երտողան անձամբ ստորագրեց հրաւերի նամակը:

ՏՆՕՐՅՆԷՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Ամեն տարի, Նոր Տարուայ և Սուրբ Ծննդեան օրերին, ԱՄՆ Արևելեան Թեմի առաջնորդ՝ Խաժակ Արք. Պարսամեանը այցելութեան է գալիս Նիւ Եորքի Սրբոց Նահատակաց Ազգային վարժարան, որտեղ մեծ հանդիսութեամբ տեղի է ունենում Տնօրհնէքի արարողութիւն:

Տնօրհնէքի համար ամենակարեւոր նիւթերն են՝ Հացը, Ձուրը և Աղը: Սրանցից իւրաքանչիւրը ունի իր խորհուրդը: Հացը՝ որպէս Յիսուսի մարմին, Ձուրը՝ մկրտութիւն, Աղը՝ Երկրի համը: Յունուար 8-ի արարողութեան, Սրբազանին ներկայացուցեց նաև Նոր Տարուայ և Սուրբ Ծննդեան տօնական հանդեսը, որտեղ տարբեր դասարանների աշակերտների կատարմամբ հնչեցին խմբային երգեր՝ «Ճրագալոյց», «Ձեզի Մեզի Մեծ Աւետիս», տօնական երգեր, արտասանութիւն և պար:

Աւանդական Տնօրհնէքի արարողութիւնից յետոյ, Սրբազանը մի

շարք հարցեր տուեց աշակերտներին, որոնք մեծ հետաքրքրութեամբ պատասխանեցին: Հանդէսի ժամանակ մի խումբ երեխաներ իրենց ձեռքի աշխատանքները նուիրեցին Սրբազանին: Այսօրուայ արարողութեանը մասնակցում էին երեք սարկաւազներ, որոնցից մեկը՝ Գրիգոր Ղազարեանը նոյն վարժարանի շրջանաւարտներից է:

Հանդէսի վերջում Սրբազան Հայրը վարժարանի բոլոր աշակերտներին նուիրեց փոքրիկ փայտե խաչերը, որ օրհնուած էին Սբ. Էջմիածինում: Հանդէսին ներկայ էր նաև Սրբոց Նահատակաց Եկեղեցու հովիւ, Արժ.Ս.Աբրահամ Բնյ. Մալխասեանը:

Սրբազանը իր գոհունակութիւնն ու շնորհակալութիւնը յայտնեց Ազգային Վարժարանի տնօրէնուհի Չարմինէ Պօղոսեանին, որի անմիջական ղեկավարութեամբ կազմակերպուել էր այս գեղեցիկ միջոցառումը:

Վերջում տեղի ունեցաւ հիւրա-



սիրութիւն, որտեղ շրջանաւարտների հետ միասին մասնակցեց նաեւ ԱՄՆ Արևելեան Թեմի առաջնորդ՝ Խաժակ արքեպիսկոպոս Պար-

սամեանը:
(Լուսանկարները՝ հեղինակի)
ՌՌԲԵՐՏ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ
Նիւ Եորք

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԵԾԱՐԱՆՔ ՆԱՀԱՊԵՏ ՆԱՀԱՊԵՏԵԱՆԻ



Պուլենոս Այրես - Դեկտեմբեր 18-ին, ԶԲԸՄ-եան Պուլենոս Այրեսի մասնաճիւղը մեծարեց համայնքի ամենաանձնուէր անդամներէն Նահապետ Նահապետեանը, անուանակոչելով «Զօրավար Անդրանիկ» Կեդրոնի բացօդայ սրահը իր անունով: Մեծարեալը հիմնադիրը եղած է Պուլենոս Այրեսի Թեքեան Մշակութային Միութեան (նախապէս ծանօթ՝ «Արշակ Զօպանեան Մշակութային Միութիւն» անուամբ) եւ Հարաւային Ամերիկայի ՌԱԿ-ին, կեդրոն ունենալով Պուլենոս Այրեսը: Ան նաեւ 1975-ին հիմնադիրը եղած է տեղւոյն «Սարտարապատ» շաբաթաթերթին, որ կը մնայ Հարաւային Ամերիկայի համայնքներու քաղաքական եւ մշակութային կեանքի կարեւոր գործունէութիւնները ցոլացնողը:

Նահապետեան ծնած է Աթենք, Յունաստան, 1927-ին եւ փոխադրուած է Արժանթին 1950-ին: Անցնող 65 տարիներուն ան իր կեանքը նուիրած է հանրային ծառայութեան, վառ պահելով հայկական ինքնութիւնը եւ մշակոյթը այդ տարածքներուն վրայ: Նոյն ժամանակ ան ամբողջական նուիրումով նեցուկ կանգնած է Հայաստանին, անկախաբար անոր, վարչակարգին, Հայ Առաքելական Եկեղեցույ հաւատքին ու առաքելութեան ինչպէս նաեւ խօսքի ու մտածումի ազատութեան սկզբունքներուն:

Ահա այս տեսակ առաքինութիւններով օժտուած անձն է ան, որ վաստակած է համայնքին ամբողջական յարգանքը որպէս համերաշխութիւն ստեղծող մը մարդկային հասարակութեան մէջ, հետամուտ ըլլալով միշտ բարիին եւ օգտակարին յաջողութեան:

Այսպէս, Նահապետ Նահապետեանի նման անձերն են որ մեր Նոր սերունդին մէջ կերտեցին ղեկավարներ, որոնք այսօր պարտաւոր կը զգան հասարակաց լեզու գտնելու հիմնարկներու եւ համայնքներու միջեւ որպէսզի կարենանք յաղթահարել մեծ ու փոքր խոչընդոտներ եւ շարունակենք յառաջընթացը:

Մեծարանքի հանդիսութեան ընթացքին խօսք առաւ յանուն Արժանթինի ԶԲԸՄ-ին՝ Կեդրոնական Վարչութեան անդամ Ռուբեն Քէշիշեան եւ ապա, ԹՄՄ-ի եւ ՌԱԿ-ի կողմէ Միհրան Սարաքեան, որ անդրադարձաւ Նահապետեանի իրագործումներուն Պուլենոս Այրեսի, Քորտոպայի եւ Մոնթեվիտեոյի (Ուրուկուէյ) հայ գաղութներուն մէջ «Սարտարապատ»ի եւ Թեքեան Մշակութային Միութեան միջոցաւ: Պրն. Նահապետեանի որդին՝ Սերկիօ Նահապետեան խօսեցաւ իր հօր նուիրումին մասին հանդէպ իր ողբացեալ մօրը եւ երեք զաւակներուն:

Վարձքը կատար, ընկեր Նահապետ:

ՏԻԱՆԱ ՏԵՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Կաղանդ Պապան այցելեց Լաւալի Սուրբ Խաչ Եկեղեցին

Դուրսը բուք՝ ներսը տաքուկ արեւ, նուիրուած տիկիներու բարի եկարի ժպիտը ու զարդարուած սեղաններ կ'ընդունին Արարատ Բնակարաններու (ԱԲ) նաեւ Եկեղեցիիս համակիր երեցները:

Թէւ Դեկտեմբերի սկիզբն ենք, 2 Դեկտեմբեր 2014, Կաղանդ պիտի տօնենք, երեցները անհամբեր են, ուրախ ենք եւ աւելին՝ առօրեայ կեանքէն ու տուններէն դուրս պիտի ելլենք: Արդէն Կոմիտաս քահանան մեր մէջն է, մեզի հետ հրամցուած սուրճը կը ճաշակէ, սեղանէ սեղան կը մասնակցի իւրաքանչիւրիս ուրախութեան, երբեմն կատակասեր երբեմն յուսադրող, բայց միշտ ազնուասիրտ: Ինչո՞ւ չըլլալ ազնուասիրտ քանի քովն են հինէն իսկ ազգասեր ու մանաւանդ եկեղեցասեր, հասնող ու վազող, աշխատող ու քաջասիրտ այր թէ կին կամաւոր ու նուիրեալ ազգայիններ: Ահա բարի եկաքի խօսք կ'առնէ Ս. Խաչ Եկեղեցույ երեցներու յանձնախումբի ատենապետուհին՝ Տիկին Արտա Նորընծայեան որ տարիներու ընթացքին շաբաթը անգամ մը խաղերով ու զուարճալիքներով կը կազմակերպէ կէսօրուայ համեղ ճաշեր Ս.Խաչի ծխական խորհուրդի հետ համաձայնաբար:

Կը սպասենք ողջունելու մեր Նորընտիր Առաջնորդ Աբգար Եպիսկոպոս Յովակիմեան որ այսօր կը կրէ իր պարթեւական կուրծքին եպիսկոպոսական խաչը: Առաջնորդին կ'ընկերանայ Մոնթրեալի Առաջնորդանիստ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցույ սիրուած նախկին հոգեւոր հովիւ՝ այժմ Էջմիածնի ծառայ Արարատ Եպիսկոպոս Գալթաթեան: Մեր ուրախութիւնը կրկնակի էր: Տեր Կոմիտաս խօսք առնելով նախ շնորհակալութիւն յայտնեց Եկեղեցիիս Ծխական խորհուրդի պատուարժան անդամներուն ու երեցներու յանձնախումբին Ամալորի հիւրասիրութեան համար, ապա շնորհաւորեց Նոր Տարիին ներկայ հիւրերուն: Ան անուններով յիշեց Ռսկեայ Տարիքի լուսաբնակ

երեցները որոնք այսօր հոգիով մեզ հետ են, աւելցուց ան: Մեր Առաջնորդը եւս տուաւ իր պատգամը, սրտագին բարեմաղթութիւններ, յուսալից օրեր: Նոյնքան եւ աւելի յուզիչ էր երեցներուն ուղղուած Առաջնորդին սա խօսքը «Մենք կրօնականներս ձեր աղօթքներուն պէտք ունինք» ու օրհնեց սեղանները: Մեր Առաջնորդին յորդորները իմաստուն են, պարզ, չըսելու համար ինքնաբերական:

Շնորհաւորելի են Կանանց Յանձնախումբը որ փոքր եկեղեցիին մէջ կարգին կանոնին կարգադրեր են բոլորին համար երկար հանգստաւետ տօնաւեղան աթոռներ, եւ մանաւանդ փոքրիկ խոհանոցին մէջ պատրաստուած համադամներ: Դողդոջուն, կռակող մեծ բեռով Կաղանդ Պապան սկսաւ բաժնել նուիրներ, մեր ուրախութիւնը անսահման էր:

Ձեռքի զանգակի ղօղանջին մը. Նորութիւն է թէ աւանդութիւն: Շատերու համար Նորութիւն՝ Ս. Խաչին համար աւանդութիւն: Արտան է, երեցներու ատենապետուհին, իր կողմէ պատրաստուած հսկայ կարկանդակով մը կը յառաջանայ դէպի մայր սեղանը խուրձ մը մոմերով եւ կը հրաւիրէ իւրաքանչիւրը Նոր Տարուայ ուխտով մը վառել մոմ մը: Լայնատարած կարկանդակը լեցուցաւ վառուած մոմերով, եկեղեցին կրկնապատիկ լուսաւորուեցաւ եւ մեր յոյսերն ու երազները մասամբ մը կարծես իրականացան:

Շնորհակալութիւն Ս.Խաչ Եկեղեցիի հովիւին ու հոգաբարձութեան, մասնաւորապէս երեցներու յանձնախումբին, ԱԲի երթելեկը ապահովող կամաւոր անձերուն. մէկ խօսքով երեցները ուրախացնողներուն:

Բոլորին ու բոլորին Շնորհաւոր Նոր Տարի:

Հիւրասիրութիւնը կատարեալ էր:

Բ. ՏՐԴԱՏԵԱՆ ԳՈՒՅՈՒՄՏԵԱՆ



SERVICES DE SOUTIEN À LA FAMILLE HAY DOUN
ՀԱՅՏՈՒՆԻ ԻՏՈՒՆՅՈՒԹՅԱՆ ԱՊՈՒՐՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ՏՈՒՆ
FAMILY SUPPORT SERVICES HAY DOUN

Երբ որ համայնք մը կ'աշխուժանայ

2015 տարուան սկիզբը, որպէս Հայ Տուճի ատենապետ, չեմ կրնար ձեզի հետ չբաժնակցիլ քանի մը մտորումներ եւ զգացումներ զորս ապրեցայ նախորդ տարուան ընթացքին, յատկապէս Սեպտեմբեր ամսուրը սկսեալ: Սեպտեմբերին էր, որ սկսանք ընդունիլ Հայ Տուճի հովանաւորած Սուրիահայ ընտանիքները եւ այս մէկը Քէպէի գաղթականութեան նախարարութեան հաւաքական հովանաւորութեան ծրագրի ծիրէն ներս:

Մեր ծրագրի սկիզբէն, 2009-էն, հովանաւորեցինք 44 Իրաքահայ գաղթական ընտանիքներ, որոնք ոչ միայն ընտելացան հիւրընկալ Նոր Երկրին, բայց նաեւ գաղութին մէջ գործօն մասնակցութիւն ունենալով, իրենց փոխադարձ ներդրումը ունեցան Քէպէին: Անոնցմէ ոմանք նոյնիսկ, Սեպտեմբեր 2014-էն ի վեր, կ'ընկերակցին Նոր հասնող Սուրիահայ ընտանիքներուն:

Մոնթրէալահայ գաղութը հարստացաւ 260 նոր անդամներով եւ ուրիշ շատեր պիտի հասնին 2015-ին: Այս ծիրէն ներս, մեծ հաճոյքն ունեցայ մաս կազմելու Հայ Տուճի անձնակազմին, որուն պարտականութիւնն է դիմաւորել նոր հասնող ընտանիքները: Գործընկերներուս հետ ապրեցանք անմոռանալի պահեր, ընտանեկան համախմբումի մը նման, կարծեք նեղութեան եւ վախի տարիներէ ետք հարազատ ընտանիք մը միացանք: Շնորհակալութեան արտայայտութիւններ լսեցի անհատներէ որոնք հազիւ կրնային զսպել իրենց արցունքները, նոյնիսկ ծունկի եկայ տիկինի մը հետ աղօթելու համար անոր հետ եւ շնորհակալութիւն յայտնելու Աստուծոյ որ ճամբան հարթեց դէպի հոս հասնելու: Բայց նաեւ տեսայ

ընտանիքներ, որոնցմէ մահը կամ առեւանգումը իւրաքանչիւր անդամներ, որոնք խոժոռ դէմքերով եւ աչքերուն մէջ արցունքներով հասան, ամէն անգամ մեզ եւս յուզմունք պատճառելով:

Եւ այսպէս, պատմելիք դէպքերը չեն պակսիր, եւ յաճախ մեր մօտ հարցադրումներ կը յառաջացնեն, ինչպէս հանդիսանալով: Անոնք նաեւ կը կանգնին Հայ Տուճի վարչութեան միաձայնութեամբ որդեգրած որոշումին ետին՝ մեզի դիմող բոլոր ընտանիքները հովանաւորելու որոշումին: Չէինք կրնար անտարբեր մնալ նախ Իրաքահայ եւ ապա Սուրիահայ մեր քոյրերուն եւ եղբայրներուն օգնութեան կանչին:

Անկասկած այս նոյն զգացումներով մղուած, Մոնթրէալահայ գաղութի բոլոր անդամներու կողմէ կը տեսնենք հետզհետէ ծրագիրներ որոնք կեանքի կը կոչուին օգնելու համար նոր հասնողները: Չենք կրնար չյիշել բոլորին ջանքերը մեզի ձեռք մը տալու եւ օժանդակելու համար Քէպէ հասնող գաղթականները:

2009-էն ի վեր, գաղթականներու դպրոցական ընդունելութեան մեր առանձնաշնորհեալ գործակիցը եղած էր Ալէք Մանուկեան Վարժարանը որ ստեղծելով յատուկ դասարան մը ընդունեց Իրաքահայ եւ Սուրիահայ դպրոցական տարիքի փոքրիկները, անոնց սորվեցնելով Ֆրանսերէն եւ այլ նիւթեր: Այս տարի Ս. Յակոբ Ազգային վարժարանը եւս յատուկ դասարան մը յառաջացուց եւ ներկայիս կ'ընդունի դպրոցականները: Այսպիսով, մեր հայկական վարժարանները ձեռք ձեռքի տալով միասին կը գործակցին, դպրոցական տարիքի երիտասարդներուն ուսման ապահով եւ



5 Դեկտեմբեր 2014-ին, Աննա Չէյթունցեանի դուստրը Զուրի Նաբբաշեան եւ Կալակները, Մոնթրէալի մէջ կը միանան իրենց ընտանիքին: Չորս սերունդներ վերամիացան եւ հնարաւորութիւնը ունեցան միատեղ նշելու Սուրբ Ծննդեան տօնը:

յարմար միջավայր մը ստեղծելու:

Աւելին, այս տարի Մոնթրէալի եւ Լաւալի Հայ Կեդրոնները յանձնախումբ մը յառաջացուցին Սուրիահայ ընտանիքներուն նիւթական եւ անմիջական կարիքները հայթայթելու համար: Մոնթրէալի Հայ Աւետարանական Առաջին, եւ Եղբայրակցութեան Եկեղեցիներուն աջակցութիւնը մեծապէս գնահատելի է: Իսկ վերջերս, Հայ Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, գործակցութեամբ Թէքեան Մշակութային Միութեան, Պոլսահայ Միութեան եւ Հայաստանեայց Առաքելական Սրբ. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ, յանձնախումբ մը յառաջացուցին՝ Նորահաս ընտանիքներուն պէտքերը հոգալու համար:

Դժուար է նշել բոլոր նախաձեռնութիւնները մէկ էջի մէջ, բայց պէտք է նաեւ յիշել Քէպէցիներու անհատական օժանդակութիւնները, ըլլան անոնք Քէպէահայ կամ ոչ: Անոնք գուլիսներու ետին իրենց ներդրումը կը բերեն այս աշխատանքին, առանց իսկ երախտագիտութիւն պահանջելու:

Հայ Տուճը չի կրնար անտարբեր եւ լուռ մնալ այս բոլոր նախաձեռնութիւններուն դիմաց: Կ'ուզենք ձեզի շնորհակալութիւն յայտնել: Շնորհակալութիւն բոլոր Սուրիահայ

ընտանիքներուն անուսով: Այս փոքրիկ կազմակերպութիւնը որ գոյութիւն ունի իր կամաւորներուն եւ մասնագիտացած անձնակազմին շնորհիւ, իբրեւ առաքելութիւն ունի օժանդակել անհատներ եւ ընտանիքներ որոնք դժուարութիւններու դիմաց կը գտնուին: Մեր այս առաքելութիւնը, առանց սահմանի է, եւ Սուրիահայերը անոր շօշափելի փաստն են:

Մենք այլ ձեզի պէս մեր սրտին մէջ ունինք մեր գաղութի բարօրութիւնը: Կը հաւատանք որ գաղութ մը կ'աճի զօրաշարժի ենթարկւելով, գիտենք որ համայնք մը կը բարգաւաճի իր անդամներուն մէջ ստեղծուած ամուր կապերով: Այս ծրագիրը փաստեց որ մեր համայնքը կրնայ շարժիլ եւ կրնայ հաւաքական ջանքերով աշխատիլ որպէսզի առաւել եւս հասնի իր անդամներու օգնութեան: «Հոն ուր միութիւն կայ, գորութիւն կայ» այս օրինակը մեր ապագայ սերունդներուն հազար պատգամ է: Երբ որ համայնք մը գործունեայ դառնայ, աշխուժանայ, կրնայ լեռներ շարժել... Հայ Տուճի Սուրիահայութեան հաւաքական հովանաւորութեան ծրագիրը փաստն է:

**Ատենապետ՝
Նայիրի Թավլեան**

Գենկիզ Աբթար. «Արդեօք պե՞տք է ճանչնանք Հայոց Ցեղասպանութիւնը, թե՛ շարունակենք խաբել մենք մեզ». «Հայոց Ցեղասպանութիւնը Փոքր Ասիոյ մեծագոյն ողբերգութիւնն է»

Յայտնի թուրք լրագրող եւ գրող Գենկիզ Աբթար թրքական «Թարաֆ» եւ անգլիատառ «Թուսէյզ Չաման» օրաթերթերուն մէջ լոյս տեսած «Մուտք գործելով 2015 թուական» յօդուածին մէջ անդրադարձնալով Հայոց ցեղասպանութեան հարցին՝ կը գրէ.

«Ո՛վ գիտէ, թերեւս այն, որ չարը մեզ կը հետապնդէ, անվերջանալի գանգուածային սպանութիւնները եւ չարչարաններէն ապաքինելու մեր անկարողութիւնը պայմանաւորուած է դարաւոր անէծքով ու սուտով: Դուք ի՞նչ կը կարծէք: Թերեւս ասիկա հայերու, երեխաներու, կիներու եւ տղամարդոց, առանց դազադներու մահացած ժողովուրդի անէծքն է: Չի բացառուիր, որ մեր հոգիի փոթորիկներուն պատճառը ճիշդ այս է, ճիշդ այն տարաբախտ քաղաքացիները, որոնց շարքին էին նաեւ յոյները, ասորիները, ալեկներն ու քիւրտերը:

Թերեւս ջարդերը, որոնց հաշուի չեն առնել սկսած 1915 թուականէն, եւ այն «գինը», որ այդպէս ալ մնաց չվճարուած, այժմ կը վճարուի գայն



իրականացնողներու թոռներուն կողմէ՝ տարբեր ճամբաներով: Գողցուած կեանքերը, թալանուած տունները, ոչնչացուած եկեղեցիները, բռնագրաւած դպրոցներն ու շորթուած սեփականութիւնները... «Արդեօք Աստուած կրնայ ստիպել թեզի վճարել այդ բոլորին համար: Եւ արդեօք մենք կը վճարենք մինչեւ օրս կատարուած բոլոր անարդարութիւններուն համար»:

Հակառակ դարաւոր անէծքին՝ 2015 թուականին բանավեճ պիտի ըլլայ. «Արդեօք ատիկա ցեղասպանութիւն էր», հարցում մը, որուն պատասխանը տակաւին չէ տրուած: Մենք պիտի տեսնենք, թէ ինչպէս պետութեան վարձկանները հսկայական ջանքեր կը գործադրեն ամօթը ծածկելու եւ ատոր հետ առերեսուելու ուղղուած բոլոր քայլերը յետաձգելու համար: Եթէ անոնք կարելիութիւն ունենային, պարզապէս պիտի խուսափէին 2015 թուականէն: Պիտի կազմակերպուին հանդիպումներ, գիտաժողովներ, քննարկումներ, որոնց մէջ պիտի յայտարարենք, որ հայերը մեզ սպաննած են, եւ այդպէս պիտի շարունակենք պարել սեփական մեղեդիի վրայ:

«Որքա՞ն ժամանակ պէտք է անէծքը իր գործը կատարէ, մինչեւ մենք մեզի հարցնենք.

- Հաշուի նստի՞լ ազգը արեան միջոցով շեւացնելու մեր քայլերուն հետ:

- Իմանա՞լ եւ յիշե՞լ, թէ ինչպէ՞ս անվնաս, աշխատասեր, արդիւնաւետ, տաղանդաւոր ու
Ծար. էջ 12

ABAKA

SECTION FRANÇAISE

LUNDI 26 JANVIER 2015

Contrôle renforcé des frontières en Arménie

Dans le sillage des attaques transfrontalières des derniers jours par les forces armées azerbaïdjanaises, le ministère de la Défense d'Arménie a élaboré des procédures pour renforcer le contrôle des frontières.

Le document de sept points appelant à une vigilance accrue, a été présenté par le ministre de la Défense Seyran Ohanian à une réunion de travail à Erévan.

« Nous devons combattre les actes de sabotage et d'espionnages, multiplier les exercices d'entraînement afin de renforcer la combattivité de toutes les unités de l'armée, et punir l'ennemi. Nous devons appliquer de plus grandes peines contre l'adversaire et parfois être le premier à lancer une attaque, sans attendre que l'adversaire n'agisse. Nous devons avoir la capacité de réagir régulièrement et avoir toujours en mains toutes les actions et des mesures punitives, » a-t-il noté.

S. Ohanian a indiqué que les troupes déployées le long de la frontière entre l'Arménie et l'Azerbaïdjan et de la « ligne de contact » plus militarisée encore entourant le Haut-Karabagh doivent être prêtes à mener à tout instant ses opérations punitives ou préventives.



Deux tentatives d'infiltration des frontières par l'Azerbaïdjan

Le 11 janvier, vers 23h, les forces azerbaïdjanaises se sont infiltrées dans des positions militaires arméniennes de la ligne de contact avec le Karabagh et les troupes azerbaïdjanaises. Aucune perte n'a été rapportée du côté arménien.

Les tensions dans la zone du conflit du Karabagh ont gagné en intensité depuis, comme l'a reconnu le 12 janvier le ministère azéri des affaires étrangères, qui a bien sûr dénoncé les « actes systématiques de provocation de l'Arménie, » rendue donc responsable de l'escalade des tensions, selon l'agence de presse APA. Les autorités militaires à Erévan et à Stépanakert avaient déjà fait état d'une augmenta-



tion alarmante des incursions azéries l'an dernier, qui s'est traduit par des bilans nettement plus lourds pour chacune des parties. En 2014, au moins 14 soldats azerbaïdjanais et 5 soldats arméniens ont été tués durant ce regain de violence.

Le Haut-Karabagh doit être impliqué dans le processus de paix

Le député du Haut-Karabagh, Vahan Badalian, estime qu'un règlement pacifique du conflit du Haut-Karabagh nécessite absolument la participation l'Artzakh dans les négociations. Le Haut-Karabagh ne participe plus aux négociations depuis la présidence arménienne de Robert Kocharian.

Selon le député, « le processus de reconnaissance de l'Artzakh [Haut-Karabagh] a une histoire de plus de deux décennies. Un événement important a été la signature du cessez-le-feu par l'Azerbaïdjan en 1994, ce qui a permis une trêve ainsi qu'une certaine reconnaissance de l'indépendance de l'Artzakh. C'était un accord trilatéral signé par l'Arménie, l'Artzakh et l'Azerbaïdjan. Plus tard, cependant, l'Artzakh s'est retrouvé en dehors du processus de reconnaissance qui a ralenti. »

L'un des facteurs positifs durant cette période a été le développement de la nation du Haut-Karabagh.

« Bien sûr, le monde entier sait que l'Artzakh est partie aux négociations, et nous avons décidé d'obtenir notre indépendance. Mais notre but principal est de nous joindre à l'Arménie, ce qui exige la pleine reconnaissance, » a déclaré M. Badalian.

Commencer l'année du Centenaire du mauvais pied

**EDITORIAL ECRIT EN ANGLAIS
PAR EDMOND Y. AZADIAN
ET PUBLIER DANS THE ARMENIAN
MIRROR-SPECTATOR EN DATE
DU 11 JANVIER 2015**

Comme si le fléau de nos échecs en diaspora ne suffisait pas en ce moment historique, des dissonances et des discordes font maintenant surface en Arménie, à un moment où la coopération et l'harmonie sont certainement nécessaires afin de relever les défis de ce siècle.

Les activités autour du centenaire se confinent jusqu'à présent à des cérémonies, à des rassemblements symboliques et à des actes de mémoire déchirants, qui servent tous de catharsis nécessaire à la douleur accumulée au cours du siècle dernier. Mais si ces activités ne sont pas combinées à un activisme politique, nous serons condamnés à vivre dans un monde illusoire.

La déclaration politique la plus importante aurait dû être le parachèvement et l'inauguration du Musée du génocide arménien, à un pas de la Maison Blanche, dans la capitale des Etats-Unis. Cela aurait servi de symbole à notre volonté collective de survivre et d'obtenir justice. Ce musée aurait également servi à rappeler au monde un siècle d'injustice, et aurait été un forum éducatif pour tous afin de faire connaître le génocide arménien.

L'impossibilité de livrer le musée en temps afin de fournir de substance à nos mémoires est une catastrophe, tandis qu'une autre est l'indifférence autour de cet échec. Où est l'indignation?

Ne pas avoir construit le musée en 2015 équivaut à offrir aux Turcs une victoire sur un plateau d'argent. La honte s'adresse à tous ceux qui ont contribué à cet échec monumental, mais surtout, à l'ensemble de la communauté pour son indifférence nonchalante à demander des comptes. C'est bien là la part de responsabilité de la diaspora.

En ce qui concerne l'Arménie, nous avons des nouvelles encore plus décourageantes. Les experts qui devraient jeter les bases de nos activités du centenaire, notamment en développant une solide littérature scientifique sur le génocide, se prennent actuellement à la gorge.

Alors que les érudits en Arménie et en diaspora travaillent à contre-courant, se lançant des épithètes peu recommandables, la maladie a atteint l'Arménie et oppose les savants locaux les uns contre les autres.

